

մանակ, որից դուրս՝ արտոնել նոցա աշխարհիկ սքեմ կրել»... կ'ուզեմ որ թանաքը ցամքի պահ մը գրչիս ծայրը, և չկարենամ գրել այս մասին, կ'աղօթեմ միայն որ Տէրը ինքն հովանաւորէ մեր Ս. Եկեղեցին և առաջնորդէ զայն ի գործս բարիս:

Գրութեանս սկիզբը «Նշան» կոչեր էինք սքեմի այս հարցը: Մեզի համար անշան է ան իսկապէս՝ իբրև բարեկարգութեան ծրագրի տարր: Այդպիսի ծրագրի մը մէջ պէտք է մտնեն ա'յնպիսի խնդիրներ միայն որոնք, իբրև սկզբունքային հարցեր, կրնան տանիլ զմեզ ստուգապէս շինիչ եւ վերանորոգիչ աշխատանքի: Ու այս հարցին, որ, ոչինչ կ'արժէ այս տեսակէտով, այս հարցին շուրջ ձեռք բերուած յաջողութիւն մը ունայնամիտ գոհունակութիւն մը միայն կրնայ պատճառել լոկ կարճատեսներու, կարծել տալով իրենց՝ բան մը ըրած ըլլալ, մինչ ըլլալիքը եղծումի գործ միայն պիտի լինէր քան ստեղծումի գործունէութիւն:

Ձ'արժեք բնաւ դիւրագագծութիւններ վիրաւորել առոր համար և տարակարծութեանց տեղի տալ: Լաւ է որ, բացի այն երկիրներէն անշուշտ, ինչպէս Թուրքիա, ուր պետական ստիպիչ արգելք կայ, իրաց վիճակը պահուի, մերձաւոր արեւելքի հարազատ վայրերուն մէջ փակեցով, պարեգոտով և վերաբերուով միասին, իսկ սփիւռքի եւրոպական և այլ հեռաւոր վայրերուն մէջ՝ փոխանակ փակելով՝ պատշաճ բեղոյր մը միայն ընտրելով, և առ նուազն պարեգոտ մը ունենալով անհրաժեշտ, կլիմային համեմատ թանձր կամ թեթև վերնազգեստի մը հետ: Իսկ բոլորովին աշխարհիկ զգեստը անպատշաճ է ի սպառ՝ հայ հոգևորականին համար:

* * *



ՀԱՒԱՏՔՐԻ ԵՒ ՄՏԱՆՄԱՆՆ ԾՈՒՔՆԵՐ

Աստուծոյ ցանոց ճախքները անհունապիս աշխատանքն են. Հաւասքը, ունանք մեք, Աւեստանի խիստ կողմնուն կը կառչի աննեկն առաջ. ուրիշներուն մեք՝ անոր միոյթարիչ կողմնուն. մին կը ճառապի և կ'արտասուէ՝ քողորքեան հաւաստի առաջ. ուրիշ մը կը հաւաստի անոր, դեռ զղբումին դառնութիւնը չը ճանչցած: Հոգին կը շնչի ուր կը կամի. մերք ուժգին հով մըն է ան, որ կը ճապարէ և կը կոտորէ ինչ որ իր դիմը կ'նկնէ. մերք

խաղցրութեամբ լեցուն շունչ մըն է, որ սիրտնուն մինչեւ խորք կ'անցնի և իր քաջ հեւոյթը կը հաղցնէ անթաւանդութեան սառնոյցները: Զգուշանանք անոր գնացին ճախքայ գծիչ. քայց սա՛ գոնէ պահէնք միտեմքիս, թէ քիստոնեական կեանքի քոյր ասիւնաններուն վրայ պատախանաւոր ենք մենք մեր հաւաստին համար. վասնզի, իր խորին մեք, անիկա միշտ մեր կեանքին է որ կ'ախուռն ունի: Այնքան ճշմարիտ է այս կէտը որ երբ հարցնեմք ինձի թէ Ի՞նչ է Առաքեալին անաշխատ հաւաստին գաղտնիքը, պիտի խկոյն ըստի. Ի՞նչ կեանքը:

ԷՕԺ. ՊԵՐՍԻԷ